

ԳԵՒՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

ՆՈՅ ՆԱՅԱՊԵՏԸ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՅԻԲԱԿԱՆ ՏԵՍԱՆԿԻԲՆԵՐԻՑ՝

Մարդկության ամենախորհրդալուր պատմություններից մէկը թերեւս Նոյ նահապետի եւ ջրհեղեղի վերաբերեալ աւանդութիւնն է, որ իր արձագանքն է գտել տարբեր՝ հին ու նոր, ժամանակագրական առումով եւ աշխարհագրօրէն հեռու ու մօտիկ ժողովուրդների բանահիւսական շտեմարանում: Եւ եթէ միջագետքեան հնագոյն քաղաքակրթութիւններից մինչեւ Զինաստան ամենակուլ ջրերից փրկուածի պատմութեան տարածումը նախկինում ջանում էին հիմնաւորել թափառող պատումների կամ անմիջական փոխառութեան հանգամանքով, ապա մի այլ կարգի դժուարութիւն առաջացրին հնդկացիների յիշողութեան մէջ դրոշմուած օրինակները, որ հանդիպում էին Ամերիկայի ծայր հիւսիսից մինչեւ հարաւ²: Յընթացք ժամանակի մանրակրկիտ ուսումնասիրութիւնների շնորհիւ տրոհուեցին ուսումնասիրողների կարծիքով նախնական եւ առաւել հին նմուշները, բացայայտուեց պատումի ճիւղաւորումն ու զարգացումը, ընդհանուր գծին հարազատ եւ միւսներից առանձնացող դրուագները: Սակայն դիտելի է, որ այդ մանրակրկիտ հետազոտութիւնների եւ լուրջ ուշադրութեան պատճառը ոչ թէ այն էր, որ ջրհեղեղի նկարագրութիւններն իրար հանդէպ բացառիկ հարազատութիւն դրսեւորելով՝ յուշում էին դրանց իրական հիմքեր ունենալու մեծ հաւանականութիւնը, այլ աշխարհում հետեւորդների մեծագոյն թիւ ունեցող՝ մահմեդականութեան, քրիստոնէութեան եւ յուդայականութեան կրօնական սուրբ մատեաններում արձանագրուած լինելու եւ այն հանգամանքով, որ ըստ այդ երեք՝ աբրահամեան կրօնների Նոյ նահապետի միջոցով էր

¹* Ստացուել է՝ 4.04.2025, գրախօսուել է՝ 5.05.2025:

էլ. հասցէ՝ hamalsaran@mail.ru, arshakm48@gmail.com:

² Տէս, օրինակ, N. LIGUORI, Echos of Ararat: Collection over 300 Flood Legends from North and South America, vol. 1, Master Books, 2021:

սկիզբ առնում մարդկութեան նոր կեանքը³։ Բայց այսուամենայնիւ հետաքրքիր է, որ միեւնոյն աղբիւրից ծագելով հանդերձ՝ երեք կրօնները տարբերութիւններ են դրսեւորում ջրհեղեղի պատմութեան՝ թէ՛ շարադրանքում, թէ՛ ընկալումներում։

Այս առումով առաւել յայտնի փաստերից է, որ շնայած աւելի ուշ գրառուած լինելու հանգամանքին՝ Ղուրանը բաւականին հեռանում է իր շարադրանքով։ Իսլամական պատումն առանձնանում է նրանով, որ ի տարբերութիւն յուդայաքրիստոնէական աւանդոյթի Նոյեան կինն ու որդիներին մէկը, չանսալով ընտանիքի հօր յորդորներին, չկամեցան նաւ բարձրանալ եւ ջրահեղձ եղան՝ այդու միանալով անհաւատներին⁴ եւ կործանուելով։

Առաւել ակնառու է աստուածաբանական ընկալումների տարբերութիւնը երեք կրօններում. Նոյ (Նուհ) նահապետն իսլամում ոչ թէ պարզապէս արդար է կոչւում, այլ ճանաչուած է իբրեւ մարգարէ եւ առաքեալ, անձամբ է ընդունել Արարչի ուղերձը՝ ջանալով Նրա խօսքը հասցնել մարդկանց⁵։ Այս համապատկերում աւելի ու աւելի շատերն են սկսում նուիրուել մեծ նահապետի մասին պատմութիւնների քննութեանը՝ իրենց ուսումնասիրութեան առարկայ դարձնելով ջրհեղեղի եւ Նոյեան վերաբերեալ՝ կրօններում առկայ տարբերութիւնները։ Տուեալ ուղղութեան նոր հրապարակումներից մէկի համառօտագրութեան մէջ կարդում ենք. «Հետազօտողը եզրակացնում է, որ Աստուածաշնչում Նոյեան եւ ջրհեղեղի պատմութիւնն այլասերուածներին զգուշացնելու եւ արդարներին ոգեշնչելու համար է։ Ղուրանում առկայ նոյն պատկերն անհաւատարմութեան սարսափելի հետեւանքների մասին զգօնութեան եւ սթափուելու կոչ է՝ ուղղուած Աստծուց հեռացածներին։ Աստուածաշնչեան պատմութիւններում Արարիչը որոշել է ջրհեղեղով մաքրել ապականուած աշխարհը, սակայն յետոյ ցաւել է դրա համար (ընդգծումը մերն է.՝ Լ. Յ.), մինչդեռ Ղուրանում ջրհեղեղը տեղի է ունենում յարդիւնս Աստծուն ուղղութեամբ աղօթքի, որ Նոյն էր վերառաքել։ Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ ջրհեղեղի

³ S. J. G. FRAZER, Folk-lore in the Old Testament: Studies in Comparative Religion, Legend and Law. London: Macmillan, 1918, The Flood Myth, ed. A. Dundes, Berkeley : University of California Press, 1988:

⁴ Նոյեան կնոջ մասին տե՛ս սուրահ Ատ-Թահրիմ, 66:10, որդու մասին՝ Սուրահ Հուդ, 11:40–46:

⁵ Սուրահ Նուհ 71:1:

երկու պատմություններն Աստծու կերպարը պատկերում են երկու տարբեր ձևերով. Աստուածաշնչեան Արարիչը որոշ չափով մարդկայնացել է՝ դրսևորելով մարդկային սխալների ընկալում, իր բոլոր արարածների հետ ուխտ (համաձայնություն) կնքելու պատրաստակամության յատկանիշներ: Ղուրանում Աստուած գերծ է մարդկային բոլոր գծերից. Նա անկրկնելի է եւ ամենագէտ, իր ակնկալիքն է, որ մարդն իրեն ենթարկուի ամբողջ էությունմբ, ուստի Նա պատիժ է սահմանում որպէս անհաւատարմության հատուցում: Ղուրանական ուխտը ենթադրում է միակ Աստծուն հնազանդուել, սակայն, ի տարբերություն Աստուածաշնչեան Արարչի, Ղուրանի Աստուած որեւէ պարտաւորություն չունի»⁶:

Վերելում, թարգմանություն մէջ, ընդգծուած խօսքերի կապակցութեամբ անխտիր պէտք է շեշտուի, որ քրիստոնեայ աստուածաբանները մշտապէս առանձնակի զգուշաւորութեամբ են դիտարկել այն հատուածները, որոնցից ենթադրելի են «Աստուած զղջաց» կամ «ցաւեց իր սրտում» մտքերը, կամ հնարաւոր է բխեցնել նման գաղափարներ: Իբրեւ օրինակ կարելի է յիշել ասենք՝ Ծննդ. 2. 6-ը. «Եւ ստրջացաւ Աստուած զի արար զմարդն ի վերայ երկրի. եւ մտախոհ եղեւ ի սրտի իւրում» կամ հէնց ջրհեղեղին վերաբերող Ծննդ. Ը. 21-ը. «Տէր Աստուած, ածեալ զմտաւ. Ո՛չ եւս յաւելից անիծանել զերկիր վասն զորոնց մարդկան: Զի միտք մարդկան հաստատեալ են ի խնամս չարի ի մանկութենէ իւրմէ» տողերը: Այսպիսի հատուածները տեղին է ընկալել Թուոց ԻԳ. 19-ի լոյսի ներքոյ. «ո՛չ իբրեւ զմարդ է Աստուած ի զարթնուլ, եւ ո՛չ իբրեւ զորդի մարդոյ ի սպառնալ»՝ այսինքն Արարչի վերաբերեալ ասուած խօսքերը չի կարելի հասկանալ մարդու հանգամանքի նմանութեամբ՝ զարթնելու, սպառնալու կամ զղջալու իմաստներով, այլ իբրեւ ելակէտ պէտք է գիտակցել, որ Աստծու կամքն անփոփոխ է եւ նոյնն է եղել թէ՛ ջրհեղեղից առաջ, թէ՛ յետոյ: «Զղջաց» «ցաւեց» կամ նման արտայայտութիւնները բացատրելի են զուտ որպէս մահականացուի լեզուով արուած նկարագրութիւն, որի շնորհիւ մարդիկ պիտի կարողանան հասկանալ Աստծու վերաբերմունքը մեղքի հանդէպ: Ուստի դիտարկուող ձեւակերպումն աստուածային դատաստանի խստութեան եւ ողորմածութեան

⁶ Són F. S. CHOWDHURY, Noah and the story of flood in the Bible and the Qur'an, Master's Thesis in Nordic Master in Religious Roots of Europe, Department of Archaeology, History, Cultural Studies, and Religion, University of Bergen, 2016, էջ 1:

միաժամանակեայ պատկերումն է, այլ ոչ թէ հոգեվիճակի՝ բառացի եւ ուղղակի բնորոշում: Հետեւաբար պատումի մէջ կարեւոր է, որ ջրհեղեղը ներկայացում է որպէս դատաստան, իսկ դրան յաջորդում է Նոյ նահապետի՝ իմա՝ մարդկային սերունդների հետ ուխտը (Ծննդոց Թ.): Եւ դա մատնանշում է, որ Աստծու նպատակը ոչ թէ մարդկութեան կործանումն էր, այլ մաքրումը եւ նոր սկիզբը, ուր ջրհեղեղեան «լուացումը» աստուածաբանական խորհրդաւոր համապատկերում աղերսակցում է մկրտութեանը՝ ինչպէս կարելի է տեսնել Պետրոս առաքեալի տողերից. «Զի լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ Աստուծոյ կամացն չարչարել՝ քան չարագործացն. զի եւ Քրիստոս մի անգամ վասն մեղաց ի վերայ ձեր մեռաւ, արդարն ի վերայ անարդարոց. զի զձեզ մերձեցուցէ առ Աստուած. զի թէպէտ եւ մեռաւ մարմնով, այլ կենդանի՛ է հոգւով: Որով եւ ոգւոցն, որ էին ի բանտին, երթեալ քարոզեաց, երբեմն ապստամբելոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի յորս տապանն կազմէր. յորս նուազունք՝ այս ինքն՝ ոգիք իբրեւ ութ ապրեցան ի ջրոյն: Որ եւ զձեզ ըստ նմին օրինակի, կեցուցէ մկրտութիւնն. ոչ զմարմնոյ աղտն ի բաց ընկենլով, այլ զբարւոյ՛ մտաց հանդէս առ Աստուած, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի (Ա. Պետր. Գ. 17):

Ղուրանի միւս էական տարբերութիւնն այն է, որ հրեաների եւ քրիստոնեաների աւանդոյթից հեռանալով՝ իբրեւ տապանի հանգրուան բոլորովին այլ անուն է յիշատակում. սուրահ 11, այաթ 44-ից իմանում ենք, որ նաւը կանգ առաւ Զուդի լեռան վրայ, որի տեղագրութեան վերաբերեալ միասնական կարծիք չկայ⁷: Մեր տեսակէտից մեծ է հաւանականութիւնը, որ տապանի համար դադարի ուրիշ վայր «որոնող» որոշ «անկողմնակալ» հետազօտողներ միտուած են Արարատեան երկիր, Մասիս, Հայաստան տեղանունները ջրհեղեղի, տապանի եւ Նոյեան վերաբերեալ գիտական աղբիւրների շրջանառութիւնից հնարաւորինս դուրս մղելու գաղափարին: Սակայն դրանով ծագում է մի նոր խնդիր. հնաւանդ, դարերով ընդունուած տապանակիր լեռան անունը փոխելով՝ յիշեալներն ստիպուած են հնարաւոր հանգրուանի հաւանական նոր տարբերակ առաջարկել, որ ի ցաւ ու դժբախտութիւն իրենց

⁷ Տե՛ս A. ÖZDEMİR, Judi Mountain in Hadith Resources, Akademik Sosyal Araştırmalar Dergisi, Doi Number: <http://dx.doi.org/10.29228/ASOS.49072>, էջ 67, հմմտ. ANNE HABERMEHL, The Role of Science in Determining the Resting Place of the Ark, International “Noah and Judi Mountain” Symposium 27–29 EYLÜL 2013 ŞIRNAK:

դարձեալ նոյն Արարատեան կամ Հայաստան երկրում է՝ Վանայ ծովակից դէպի հարաւ⁸: Ղուրանում յիշուած տարբերուող տեղանունան առիթով⁹ թերեւս պէտք է յիշել, որ բացի Աստուածաշնչից Արարատեան լեռները իբրեւ հանգրուան մատնանշում են նաեւ այլ աղբիւրներում: Օրինակ՝ «Գիրք, որ կոչի Յոբելենից» կամ «Փոքր Ծննդոց»¹⁰ պարականոնը, որի ստեղծման ժամանակ է դիտւում Ք. ա. 160–150 թթ. Միջակայքը, Ե. գլխում անուանում է լեռը. «...27. Եւ ջուրը ծածկում էր երկրի մակերեսը ճինգ ամիս՝ հարիւր յիսուն օր: 28. Եւ տապանը գնաց ու կանգ առաւ Արարատի լեռներից մէկի՝ Լուբարի գագաթին: 29. Եւ չորրորդ ամսում փակուեցին ստորգետնեայ աղբիւրները, եւ կողպուեցին երկնից սահանքները, եւ եօթներորդ ամսուայ նորալուսնին երկրի անդունդների բոլոր խորշերը բացուեցին, եւ ջուրն սկսեց հոսել սանդարամետական անհունը: 30. Եւ տասներորդ ամսուայ նորալուսնին երեւացին լեռների գագաթները, եւ առաջին ամսուայ նորալուսնին երեւաց երկիրը: 31. Եւ եօթներորդ տարուայ հինգերորդ եօթներեկին ջրերն անհետացան երկրի երեսից, եւ երկրորդ ամսուայ տասնեօթներորդ օրը ջուրը ցամաքեց: 32. Եւ քսանեօթներորդ օրը Նոյը բացեց տապանը եւ դուրս թողեց գազաններին, թռչուններին եւ ամենայն արարածներին, որ շարժւում են եւ սողում»:

Պարականոնի յաջորդող գլխում գործողութիւնները շարունակւում են նոյն Լեռան տարածքում. «1. Եւ երրորդ ամսուայ նորալուսնին Նոյը ելաւ Տապանից եւ այդ՝ [Արարատեան Լուբար] Լեռան վրայ գոհասեղան շինեց»: Նախորդածների տրամաբանական շարունակութիւն հանդիսացող եօթներորդ գլխում դարձեալ յիշատակուած է տապանակիր Լեռը. «1. Եւ

⁸ S. J. P. LEWIS, Noah and the Flood: In Jewish, Christian, and Muslim Tradition, «The Biblical Archaeologist», 1984, էջ 237:

⁹ Իրականում այն ծանօթ է քրիստոնէական աւանդութեանը, եւ տարբերութիւնները լոկ արտաքին, գրութեան ձեւափոխուելու արդիւնք են՝ Զուդի-Քուդի կամ Քորդու-Կորդուք դարձեալ Արարատի երկրում:

¹⁰ Կանոնից դուրս մի գրուածք, որ ընդունւում է միայն եթովպական եկեղեցու եւ եթովպական տարածքներից սերող հրեայ համայնքներում: Այս բնագրի հնագոյն եւ հաւաստի օրինակը հաբեշերէն «Գիրք Բաշխմանցն» է: Վերնագրի «փոքր» որոշիչը չի վերաբերում գրքի ծաւալին: Իրականում այն սուրբգրական կանոնում ընդգրկուածից աւելի մեծ է: Հետագոտողները «փոքրը» բացատրում են պատմութիւնը փոքր շրջափուլերի (49-ական տարի) բաժանելով եւ մանր-փոքր հանգամանքներին ուշադրութիւն դարձնելու հանգամանքով: Բերուող հատուածը փոխադրուած է անգլերէն եւ ռուսերէն թարգմանութիւնների համեմատութեամբ: Այս աղբիւրից մէջբերումները «Էջմիածին», 2012, Բ. համարից են:

այս յոբելենի առաջին տարուայ եօթներորդ շաբաթում Արարատի լեռներից մէկի՝ Լուբարի վրայ, ուր կանգ էր առել տապանը, Նոյը խաղող[ի վազեր] տնկեց»:

Դիտելի է, որ Յոբելենիցի անգլերէն թարգմանիչը նաեւ օգտակար ծանօթագրութիւններով է օժտել գիրքը, եւ օրինակ բացատրում է. «Եւ այդ լեռան վրայ զոհասեղան շինեց (ընդգծումն իրենն է). հմտ. Ծննդ. Ը., 20: Լեռը Լուբարն է: Ըստ «Բերեշիթ Ռաբբա» [ժողովածու]ի (34) Նոյ [նահապետ]ն այս [բանը] Երուսաղէմում էր խոստացել: Ծննդ. Ը. 20-ին առընչուող Թարգում Զոնաթանի մէջ՝ տեղը չի նշում, սակայն սեղանը նոյնացւում է այն սեղանի հետ, որ Ադամն էր կերտել»¹¹: Եւ պէտք է նկատել, որ սա մի պնդում է ըստ որի կամ դրախտը եղել է Արարատեան Լուբար Լեռան վրայ, կամ գոնէ Լեռը դրախտին մօտ է՝ հանդիպակաց: Ուշագրաւ է նաեւ, որ այս աւանդութեան համաձայն նահապետն իր կեանքի մնացեալ մասն անց է կացրել Արարատեան երկրում՝ այնտեղ կնքելով նաեւ իր մահկանացուն, ինչը գրառուած է «Յոբելենից գրքի» տասներորդ գլխում. «...15. Եւ Նոյը ննջեց իր հայրերի հետ ու յուղարկաւորուեց Լուբար լեռան վրայ՝ Արարատի երկրում: 16. Նա բոլորեց ինը հարիւր յիսուն տարին, տասնինը յոբելեան, երկու եօթներեկ եւ հինգ տարի...»:

Կարելոր է նաեւ, «իւր հայրերի հետ» արտայայտութիւնը, որի համաձայն ոչ թէ լոկ Նոյը, այլ նաեւ իրեն նախորդած նահապետների հանգիստն է Լուբարը: Այս կապակցութեամբ պէտք է նկատենք նաեւ, որ Նոյեան կանգնեցրած սեղանը, որ Աստուածաշնչում «սեղան Աստուծոյ» է (Ծննդ. Ը. 20), նաեւ Ղուրանի պատմութեան հետ տարբերութիւններից մէկն է, որովհետեւ այնտեղ բացակայում են այս եւ ծիածանի վերաբերեալ պատկերները:

Յոբելենից գրքի շարագրանի համաձայն մինչ Նոյ նահապետի ննջումը Արարատեան Լուբար-Ղուբար լեռան վրայ, իր սերունդները հաստատուած էին Արարատեան երկրում եւ լոկ «18. ... Երեսունչորսերորդ յոբելեանին՝ առաջին տարում, երկրորդ եօթներեկին Փաղէկը կնութեան առաւ Լօմնա անունով մէկին, Սէնաարի դստերը: Եւ այս եօթներեկի չորրորդ տարում նա Փաղէկին ծնեց մի որդի: Եւ Փաղէկն անուանեց նրան Ռագել, որ եւ ասաց. «Մարդկային որդիները շարացան խորշելի խորհրդով՝ թէ իրենց համար քաղաք եւ աշտարակ կկառուցեն Սէնաարի երկրում»: 19.

¹¹ Տե՛ս «Էջմիածին», 2012, Բ., էջ 64:

Եւ հեռացան Արարատից դէպի արեւելք՝ Սէնաարի [երկիրը], որովհետեւ իր օրերում նրանք կառուցեցին քաղաքն ու աշտարակը՝ ասելով. «Յառաջ, եկէ՛ք դրանով երկիրնք բարձրանանք»:

Արարատեան-Հայոց երկրի հերթական յիշատակութիւնը Բերոսոս կամ Բերոս Քաղդէացու (կամ իրեն վրագրուած) գրառումն է: Բէլ-Մարդուկի տաճարի այս գլխաւոր քուրմը, հելլէնական շրջանի բաբելացի հեղինակ է, որ գրել է Կոյնէ յունարէնով: Ալեքսանդր Բազմավէպի հաղորդման համաձայն. «Բաբելոնական առաջին մատեանում Բերոսոսն ասում է, որ ինքն ապրել է Ֆիլիպի որդի Ալեքսանդրի [կառավարման] տարիներին»: Բերոսի գրուածքների պատառիկները պահպանուել են տարբեր հեղինակների քաղուածներում¹²: Ի մասնաւորի Աբիւդէնոսի շնորհիւ մեզ հասած տողերում կարդում ենք. «Այնուհետեւ ուրիշները թագաւորեցին, իսկ վերջում՝ Քսիսութրոսը, որին Կոռնոսը կանխապէս գուշակեց, որ դէսիոս (մարաց) ամսի հինգերորդ [օրը] անձրեւները յաճախանալու են: Եւ [Կոռնոսը] հրամայում է բոլոր մատեանները թաքցնել սիպարացիների Արեգ քաղաքում: Եւ մինչ Քսիսութրոսը փորձում էր դա գլուխ բերել, եւ առագաստ բարձրացնելով՝ կամենում էին նաւել դէպի Հայք, յանկարծակի նրանց մօտ [լայտնուեցին] աստուծոյ նաւավարները: Երրորդ օրը, երբ անձրեւները քչացան, [Քսիսութրոսը] հաւքեր բաց թողեց՝ տեսնելու, թէ արդեօք երկիրը ջրերի բազմութիւնից ազատուած կգտնեն: Իսկ դրանք, թեւածելով անհուն, համատարած ծովի ծփանքով, ոտքերին դադար առնելու ոչ մի տեղ չգտան եւ յետ դառնալով՝ դիմեցին Քսիսութրոսի մօտ: Եւ սպասելով եւս երեք օր՝ նորից բաց թողեց: Եւ վերադարձան՝ մագիլները կաւի մէջ թաթախուած: Եւ այդ ժամանակ աստուածները Քսիսութրոսին մարդկանց մօտից տարան, իսկ նաւը գնալով կանգ առաւ Հայոց աշխարհում, եւ փայտերն իբրեւ օգնութեան դեղ պարգեւուեցին այդ աշխարհի բնակիչներին»¹³: Նիկողայոս Դամասկացու շարադրանքում, որ պահպանուել է Յովսէպոս Փլաւիոսի քաղուածներում, խօսւում է Մինիաս երկրից վերել՝ Հայաստանում գտնուող մի խոշոր՝ Բարիս անունով լեռան մասին, որտեղ, պատմութեան համաձայն, շատերն ապաստանելով փրկութիւն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մէկը տապանի վրայ տարուելով, իջել է

¹² Դրանք բերում ենք ըստ «Յետջրհեղեղեան օրերն Արարատեան երկրում (ըստ հին աղբիւրների)», Երեւան, 2016 հրատարակութեան:

¹³ Տե՛ս «Եւսեբիոսի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակականք», մասն Ա., ժամանակագրութիւն պատմական, Վենետիկ, 1818, էջ 48–50:

գագաթին, եւ տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանուել են: «Սա հաւանաբար այն մարդն է, որի մասին գրել է Մովսէսը՝ հրեաների օրէնադիրը»,— աւելացնում Յովսէպոսը¹⁴:

Բերոսոսեան միւս հատուածը պահպանուել է Ալեքսանդր Բազմա-վէպի մէջբերումներում: Դրանցում ոչ միայն տապանի հանգրուանն է մատնանշուած, այլեւ ականարկում է, որ այդ երկրում են հաստատուած աստուածները. «[Քսիսութրոսը] հարցրեց, թէ դէպի ո՞ւր պիտի նաւարկի, եւ [Կրոմի] պատասխան տուեց, թէ՝ աստուածների մօտ»,— որ հեղինակի միւս տողերում ուղղակիօրէն Արարատի երկիրը է կոչում: Եւ խօսքն իր շարունակելով նա ասում է. «...որպէս որոշուած էր՝ նահապետի ընտանիքը փրկուում է կործանիչ ջրհեղեղից, երբ նաւը կայանում է Հայոց աշխարհում»: Միւս պնդումից ելնելով՝ կարելի է ենթադրել՝ պատմիչը նաեւ բանաւոր աղբիւրներ է օգտագործել, եթէ ընդունենք, որ խօսքի սկիզբ հանդիսացող «ասում են» կապակցութիւնը չի վերաբերում մի քանի գրաւոր յուշարձանների. «Եւ ասում են, թէ Հայքում դադար առած նաւից մինչ օրս որոշ մասեր մնացել են՝ Հայոց աշխարհի Կորդուաց լեռան վրայ: Նաեւ ասում են, թէ ոմանք բժշկութեան եւ ցաւերը դարմանելու համար նաւի ծեփածոյ նաւթից են քերում-բերում»¹⁵:

Արդէն միջին դարերում փրկութեան լեռան եւ տապանի՝ Հայաստանում գտնուելու մասին վկայող բնագրերն սկսում են մեծ թիւ կազմել¹⁶, սակայն դրանք հիմնականում դիտարկուում են իբրեւ սուրբ Գրքերի ազդեցութեամբ կամ դրանց հիման վրայ ստեղծուած գործեր:

¹⁴ «Հին յունական աղբիւրներ», Ա., Յովսէպոս Փլաւիոս, Դիոն Կասսիոս, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1976, «Հրէական հնախօսութիւն», գիրք Ա., էջ 55:

¹⁵ Եւսեբիոսի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակականք, մասն Ա., ժամանակագրութիւն պատմական, Վենետիկ, 1818, էջ 31–37:

¹⁶ Տե՛ս օրինակ՝ «Դէպի Եւրոպա Նոյեան կատարած պտոյտների պատմական ականարկ, որ ներառում է տուեալներ այնտեղ առաջին հաստատուողների ու բնակչութեան մասին» վերտառութեամբ գիրքը: Այն Ռիչարդ Լինչի անգլերէն թարգմանութեամբ Լօնդօնում լոյս է տեսել 1601 թուականին, որից եւ օգտուել ենք: Լատիներէն բնագիրը՝ “Berosi Sacerdotis Chaldaici Antiquitatum Libri Quinque” Աննիուս Վիտերբացին (Ջիովաննի Նաննի, Նէննի) առաջին անգամ հրատարակել է 1545-ին եւ մինչեւ 1612-ը գիրքը վերահրատարակուել է 20 անգամ: Աննիուսի մահուանից յետոյ հետազօտողներն սկսեցին քննադատել երկը եւ Վիտերբացուն կեղծարար համարելով՝ գիրքն անուանեցին «Կեղծ Բերոսոս»: Աննիուսին հիմնականում քննադատում էին, որ փորձել է պատմութիւնը կեղծել, նպատակ ունենալով՝ Վիտերբոն իբրեւ աշխարհի մայրաքաղաք ներկայացնել. «Annus rewrote ancient history, marshaling evidence that Rome had usurped the place of Viterbo as capital of the world» (տե՛ս “The Classical Tradition”, Editors Anthony

Տապանի՝ Հայքում հանգրուանելու իւրօրինակ տրամաբանական ապացոյց կարող են ծառայել հայ ժողովրդի յիշողութեան մէջ պահպանուած զրոյց, ասացուածք, ստուգաբանութիւնները, որովհետեւ մոլորակի ամեն ծագում չէ, որ նահապետին կամ նրա նաւին վերաբերող պատմութիւններ են պատմում: Եւ եթէ անգամ որեւէ օտար վայրում դրանք կարող է հատ ու կէնտ, արհեստական ձեւաւորուած շրջանառուեն, ապա Արարատեան աշխարհում դրանք յոյժ մեծաթիւ են, եւ դրանցից շատերը գրառուել են դեռեւս հայ դպրութեան արշալոյսին¹⁷: Առանձին խումբ են կազմում եւ յատուկ ուշադրութեան են արժանի Արամ Ղանաւանեանի¹⁸ ժողոված նմուշները, որոնց հաւաստիութիւնը չնայած պարզելն ու հիմնաւորելը թէեւ դիւրին չէ, բայց եւ մերժելի չեն գեղեցիկ ու հետաքրքիր պատկերներն աւանդութիւնների¹⁹, որ ոչ միայն պատմում կամ ստուգաբանում են նահապետի եւ իր նաւարկութեան վերաբերեալ տարբեր կտորներ, այլեւ ասես տեղանունների միջոցով քարտէզի վրայ անմիջականօրէն ուղենշում են այն ճանապարհը, որ տապանն անցել է արհաւիրքի օրերին, կամ ինչպէս ասենք՝ «915. Վարդավառ-Նաւասարդ» զրոյցի պարագային է, որ իրար է կապում Հայոց վաղնջական՝ եւ աւելի ուշ սովորոյթները, Վարդավառի ծագումը բացատրելով Նոյ Նահապետի պատուիրանով. «Ասում են, թէ երբ Նոյ Նահապետը ջրհեղեղից փրկուելով հասնում է Մասսի գագաթը եւ ապա այնտեղից իջնում է Նախիջեւան, այդ օրուանից սկսում է Հայոց նաւասարդ կոչուող ամիսը: Եւ որպէսզի ջրհեղեղի յիշատակն անմոռաց մնայ մարդկանց մէջ, Նոյը պատուիրում է իր որդիներին իրար վրայ ջուր ցողել»:

Նոյ Նահապետին անդրադառնալիս անկարելի է շրջանցել Աստծու հետ նրա ուխտը. «Եւ խօսեցաւ Տէր Աստուած ընդ Նոյի, եւ ընդ որդիս նո-

Grafton, Glenn W. Most, Salvatore Settis, Cambridge, Massachusetts, London, 2010, էջ 46): Բայց եթէ Վիտերբացուն մեղադրում են, թէ ցանկանում էր բարձրացնել իր քաղաքի հեղինակութիւնը եւ յանուն դրա կեղծում էր պատմութիւնը, ապա, թերեւս, պէտք չէ կասկածել Արարատի երկրի վերաբերեալ նրա տողերին, որովհետեւ Աննիուսը Վիտերբոյի ջատագով էր եւ ոչ թէ՛ Հայքի. հմմտ. «Հայկեան առասպելին առընչուող դրուագներ յետջրհեղեղեան Պատմութիւնից», «Էջմիածին» 2012, 2.:

¹⁷ Տես, օրինակ՝ Մովսէս Խորենացի, Ա., գ.:

¹⁸ «Աւանդապատում», Երեւան, 1969:

¹⁹ Տես օրինակ, «51. Արտոս եւ Առնոյս» սարերի, Խարբերդից դէպի հարաւ-արեւելք, Կոլճք լճի հարաւային եզրին գտնուող «68. Մաստարայ»-ի, «129. Ագռաւաքար»-ի, «143. Նոյի տապանից ընկած քար»-ի, «255. Գարապալի Աղբիւր»-ի, «400. Երեւան»-ի, «402. Նախիջեւան»-ի, «Ակոռի»-ի մասին տեղանունական կամ «349. Գոմէշ», «360. Աղանի», «372. Ագռաւ», «375. Զնճուկ» եւ շատ այլ ստուգաբանական նմուշները:

րա որ ընդ նմա էին՝ եւ ասէ. եւ ահաւասիկ ես հաստատեմ զուխտ իմ ընդ ձեզ, եւ ընդ զաւակի ձերում յետ ձեր» (Թ. 9): Աստուածաբանական դիրքերից նայելիս Նոյեան եւ Աստծու ուխտը «վերաբերում էր ամբողջ մարդկութեանը, ուստի դա այնքան մեծ նշանակութիւն չունի, համեմատութեամբ Աբրահամի հետ հաստատուածի, որովհետեւ վերջինս «առանձնաշատուկ էր», եւ այս է պատճառը, որ իբրեւ բանաձեւ մշտապէս կրկնուում է Մատթ. ԻԲ. 31–32-ում Յիսուսի ասած. «Եւ եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակովբայ» խօսքը երբեւէ չկիրառելով «Նոյ նահապետի Աստուած» կամ նման մի ձեւակերպում:

Արդէն իսլամում Նոյ, Աբրահամ, Յիսուս շարքն ստացել է հետեւեալ տեսքը. Աբրահամ՝ Աստծու բարեկամ (Ղուրան 4:125), Աբրահամը՝ Հանիֆ-միաստուածական (Ղուրան 3:67), Յիսուս՝ Աստծու Խօսք եւ Հոգի (Ղուրան 3:45, 4:171), Նոյ՝ մարգարէ եւ առաքեալ (Ղուրան 71-րդ սուրահ): Ու թէեւ արաբահամեան կրօններում Նոյ նահապետի մեծութիւնը, կարելի է ասել, մթազնուած է կամ նրան արժանին չի մատուցում, սակայն փոխարէնն այն զգալի է նրանով, որ նահապետը միակն է, որ անմահացել է նաեւ Միջագետքի եւ համայն աշխարհի հնագոյն վէպերում ու զրոյցներում: Գիլգամէշի վէպում Նոյի նախապատկեր դիտուող հերոսը՝ Ուտնապիշտիմ (շումերերէն տարբերակներում՝ Զիուսուդրա, աքքադերէնում՝ Ատրահասիս եւն), ներկայանում է որպէս ջրհեղեղից փրկուած մէկը, որին աստուածները շնորհել են անմահութիւն: Այս վէպի պահպանուած հնագոյն արձանագիր տարբերակում՝ նորաստուրական սեպագիր ԺԱ. տախտակում Գիլգամէշը դիմում է առ Ուտնապիշտին՝ փնտրելով անմահութեան գաղտնիքը²⁰ եւ համոզուած, որ միայն նա կարող է գիտենալ, որովհետեւ ըստ տուեալ պատումի լոկ նրան են աստուածներն անմահութիւն շնորհել: Մեր պարագային կարելոր է, որ համաշխարհային գրեթէ բոլոր պատմութիւններում կարելի է ճանաչել ոչ միայն գլխաւոր հերոսին, իր ընտանիքն ու նաւը, այլեւ Արարատեան երկիրը, ուր աստուածներն էին բնակւում, եւ ուր պէտք էր հասնել փրկուելու համար:

²⁰ *Տէս* The Epic of Gilgamesh: The Babylonian Epic Poem and Other Texts in Akkadian. London: Penguin Classics, 1999. — *Տախտակ* XI, էջ 88–109, *հմմտ.* JEFFREY H. TIGAY, The Evolution of the Gilgamesh Epic. Philadelphia: University of Pennsylvania Press, 1982, Эпос о Гильгамеше // Литература Древнего Востока. Москва: Наука, 1969, էջ 119–145.

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ուտնապիշտիմ, շումերերէն, տարբերակ, Չիուսուդրա, արքայերէն, Աւարիապիւ:

РЕЗЮМЕ

Статья рассматривает образ Ноя и повествование о Потопе в сравнительно-исторической перспективе, опираясь на иудейскую, христианскую и исламскую традиции, а также на древнюю месопотамскую эпическую литературу и армянскую культурную память. Особое внимание уделяется богословским различиям между авраамическими писаниями: если Библия подчеркивает завет Бога со всем творением после Потопа, то Коран изображает Ноя прежде всего как пророка и посланника, акцентируя нравственные последствия неверия.

В исследовании рассматриваются параллельные мотивы в апокрифической литературе, такой как Книга Юбилеев, у Беросса, а также в эпосе о Гильгамеше, где Утнапишти выступает как архетип Ноя, получивший бессмертие от богов. Особое внимание уделено и локализации горы, на которой остановился ковчег, в армянской традиции — будь то гора Арарат или гора Лубар — и отражению этого мотива в фольклоре, топонимике и ритуальных обычаях, таких как праздник Вардавар.

Проведённый анализ показывает, что хотя завет Ноя в авраамических религиях со временем был затенён избранничеством Авраама, образ Ноя остаётся универсальным праотцом — фигурой, увековеченной как в священных писаниях, так и в древнейших мифологических текстах человечества. Память о том, кто был спасён от Потопа в ковчеге, сохранилась почти у всех народов Земли. Примечательно, что во многих из этих традиций ясно обозначены не только ковчег и спасённый человек, но и сама земля, где ковчег остановился, — на горе Арарат в стране Армении.

SUMMARY

The article examines the image of Noah and the story of the Flood from a comparative historical perspective, drawing on Jewish, Christian, and Islamic traditions, as well as ancient Mesopotamian epic literature and Armenian cultural

memory. Particular attention is paid to the theological differences between the Abrahamic scriptures: while the Bible emphasizes God's covenant with all creation after the Flood, the Qur'an depicts Noah primarily as a prophet and messenger, emphasizing the moral consequences of unbelief.

The study reviews parallel motifs in apocryphal literature (Book of Jubilees), Berossus, and the Epic of Gilgamesh (Utnapishtim as Noah's prototype, granted immortality by the gods). Particular attention is paid to the location of the mountain, on which the ark came to rest in the Armenian tradition (Mount Ararat, Mount Lubar), and to the reflection of this motif in folklore, toponymy, and ritual practices such as Vardavar.

The analysis shows that although Noah's covenant in the Abrahamic religions was eventually overshadowed by Abraham's election, Noah remains a universal patriarch – a figure immortalized in both sacred writings and the most ancient mythological texts of humanity. The memory of Noah, who was saved from the Flood in the ark has been preserved by almost all peoples of the Earth. It is noteworthy that many of these traditions clearly identify not only the ark and the man who was saved, but also the very place, where the ark came to rest – Mount Ararat in Armenia.

